ՄԱՅՐ ԱԹՈՌԻՄ

Հուլիսի 4-ին, հինգշաբթի, «Տօն սրբոց թարգմանչացն մերոց Սահակայ և Մեսրովբայ»։ Օրվա մեծ տոնի կապակցությամբ, Օշականի Ս. Մեսրոպ Մաշտոցի անվան եկեղեցում սուրբ պատարագ մատուցեց հոգեշնորհ Տ. Մեսրոպ վարդապետ Պալյանը և քարոզեց «Անճառելի շնորհօք լցեալք ի յիշատակի սուրբ վարդապետին» բնաբանով։

Սուրբ պատարագին ներկա էին Մայր Աթոռի միաբանությունը, Հոգևոր Ճեմարանի ուսանողությունը և հավատացյալների մի ստվար բազմություն։

* * *

Հուլիսի 5-ին, ուրբաթ, Բաքու մեկնեց Մայր Տաճարի ավագ լուսարար հոգեշնորհ Տ. Մեսրոպ վարդապետ Պալյանը, որը կիրակի, հուլիսի 7-ին, սուրբ պատարագ մատուցեց և քարոզեց Բաքվի հայոց Ս. Գրիգոր Լուսավորիչ առաջնորդանիստ եկեղեցում։

Տ. Մեսրոպ վարդապետը հուլիսի 9-ին վերադարձավ Մայր Աթոռ։

* * *

Հուլիսի 7-ին, կիրակի, Մայր Տաճարում պատարագեց և քարոզեց Ամերիկայից ուխտավորաբար Մայր Աթոռ ժամանած արժանապատիվ Տ. Վարդան քահանա Մկրյանը «Այնպէս, ասեմ ձեզ, ուրախութիւն եղիցի առաջի հրեշտակաց Աստուծոյ ի վերայ միոյ մեղաւորի որ ապաշխարիցէ» բնաբանով (Ղուկ. ԺԵ 10)։

Սուրբ պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը։

Սուրբ պատարագին ներկա էր նաև ամերիկահայ ուխտավորների խումբը։

* * *

Հուլիսի 13-ին, շաբաթ, Մոսկվայի և Համայն Ռուսիո Նորին Սրբություն Ալեքսի Պատրիարքի եպիսկոպոսության 50-ամյակի հոբելյանական հանդիսության հանուն Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի մասնակցելու համար, Մոսկվա մեկնեց Գերագույն Հոգևոր Խորհրդի ատենապետ և Մայր Տաճարի լուսարարապետ գերաշնորհ Տ. Սահակ արքեպիսկոպոս Տեր-Հովհաննիսյանը։

Սրբազան հորն ուղեկցում էր հոգեշնորհ Տ. Նարեկ աբեղա Շաքարյանը։

* * *

Հուլիսի 22-ին, երկուշաբթի, «Յիշատակ մեռելոց»։ Մայր Տաճարում սուրբ պատարագ մատուցեց արժանապատիվ Տ. Հակոբ քահանա Հակոբյանը։ Հավարտ սուրբ պատարագի տեղի ունեցավ հոգեհանգստյան պաշտոն «Վասն համօրէն ննջեցելոց»։

* * *

Հուլիսի 24-ին, շաբաթ, առավոտյան ժամը 10-ին, Վեհափառ Հայրապետը մեկնեց Չեխոսլովակիայի Կարլովի-Վարիի առողջարանը՝ հանգստանալու համար։

Վեհափառ Հայրապետին ընկերանում էր հոգեշնորհ Տ. Գրիգոր վարդապետ Եղիայանը։

Երևանի օդանավակայանում Վեհափառ Հայրապետին ճանապարհեցին Մայր Աթոռի միաբանները։

Նորին Ս. Օծության ճանապարհեց նաև Հայկական ՍՍՌ Մինիստրների սովետին առընթեր Հայ Եկեղեցու գործերի խորհրդի նախագահի տեղակալ պր. Ս. Հովհաննիսյանը։

* * *

Հուլիսի 26-ին, ուրբաթ, Լենինական և ապա Թբիլիսի մեկնեց հոգեշնորհ Տ. Մեսրոպ վարդապետ Պալյանը՝ պատարագելու և քարոզելու համար։ Հոգեշնորհ հայր սուրբը հուլիսի 28-ին, կիրակի, Լենինականի Ս. Աստվածածին եկեղեցում պատարագեց և քարոզեց «Որք արժանի եղէք տեսանել մարմնով զՈրդին Աստուծոյ յայտնապէս» բնաբանով։ Իսկ օգոստոսի 4-ին հայր սուրբը պատարագեց և քարոզեց Թբիլիսիի Ս. Գևորգ առաջնորդանիստ եկեղեցում։

Մեսրոպ վարդապետը Մայր Աթոռ վերադարձավ օգոստոսի 8-ին։

* * *

Հուլիսի 28-ին, կիրակի, Մայր Տաճարում պատարագեց արժանապատիվ Տ. Հովհաննես քահանա Մարուքյանը։